Հաստատված է

«Ակտինա Կապիտալ» ՍՊԸ-ի

մասնակիցների 2026 թվականի հունվարի 23-ի

թիվ 2026/01/23-01 արձանագրությամբ

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Սերգեյ Գալոյան

23.01.2025թ.

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ակտինա Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ **«Ընկերություն»**) արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման կանոնակարգը (այսուհետ՝ **«Կանոնակարգ»**) մշակված է ՀՀ օրենսդրությանը, ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերին, Ընկերության ներքին իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան և կարգավորում են Ընկերության կողմից առք ու վաճառքի գործառնությունների իրականացման գործընթացը:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կանակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

- **«Օրենք»**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- **«Կենտրոնական Բանկ»**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
- **«Կայք»**՝ https://aktina.am/ հասցեում գտնվող Ընկերության վեբ կայքը:
- **«Արտարժույթ»**՝ "Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին" ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցները:
- **«Արտարժույթի գործարք»**՝ արտարժույթի առքի կամ վաճառքի գործարք:
- **«Հաճախորդ»**՝ անձ, որը օգտվում է Ընկերության մատուցած ծառայություններից:
- **«Պայմանագիր»**՝ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված ներդրումային ծառայությունների մատուցման համաձայնագիրը, պայմանագիրը կամ այլ փաստաթուղթը:
- **«Բրոքերային գործարք»**՝ Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արտարժույթով կատարվող գործարք:
- **«Դիլերային գործարք»**՝ Ընկերության հաշվին և Ընկերության անունից արտարժույթով կատարվող գործարք:
- **«Պատվեր»**՝ արտարժույթով գործարքների կնքման նպատակով ներկայացվող Հաճախորդի հանձնարարականը:
- **«Սպասարկող բանկ»**՝ բանկ, որում Ընկերությունը ունի դրամային և արտարժութային հաշիվներ:
- **«Բորսա»**՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ:

- **«Ներքին գործարք»**՝ արտարժույթի առքի կամ վաճառքի գործարք, որի կողմերն են Ընկերությունը և Հաճախորդը:
- **«Արտաքին գործարք»**՝ արտարժույթի առքի կամ վաճառքի գործարք, որում գործարքի մի կողմը Ընկերությունն է կամ Հաճախորդը, իսկ մյուս կողմը որևէ երրորդ անձ է:

2.2. Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և դրա հիման վրա Կենտրոնական Բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Արտարժույթի գործարքները Ընկերության կողմից իրականացվում են բացառապես անկանխիկ եղանակով և միայն Հաճախորդի կողմից Պատվեր ներկայացնելու ու Ընկերության կողմից այն հաստատելու դեպքում:

3.2. Հաճախորդի կողմից Պատվերները ներկայացվում են Կանոնակարգի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

3.3. Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող Պատվերը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին թե տվյալ պատվերը ներքին գործարքի կատարման Պատվեր է, թե Արտաքին գործարքի կատարման պատվեր:

3.4. Հաճախորդը կարող է Ընկերությանը ներկայացնել Արտաքին գործարքի կատարման Պատվերի հետևյալ տեսակները՝ ըստ գնային պայմանների.

(Ա) Շուկայական Պատվեր,

(Բ) Լիմիտային Պատվեր,

(Գ) Ստոպ Պատվեր,

(Դ) Ստոպ լիմիտային Պատվեր,

3.5. Հաճախորդը Պատվերներ է ներկայացնում, դրանցում փոփոխություններ է կատարում կամ պատվերները հետ է կանչում Պայմանագրով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

4. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ընկերությունն իրավասու է կատարել Բրոքերային և Դիլերային գործարքներ:

4.2. Արտարժույթով գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝

4.2.1. համոզվի, որ գործարք կատարելու համար Պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման

4.2.2. այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե Պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և
4.2.3. Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի Պատվերի ճշգրիտ կատարումը:
4.3.Հաճախորդի ներկայացրած Պատվերները պետք է կատարվեն մինչև տվյալ Պատվերի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Եթե այդ ժամկետում հնարավոր չի լինում կատարել Պատվերը համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա Պատվերը համարվում է դադարեցված:
4.4.Հաճախորդի՝ արտարժույթի գնման պատվերի կատարման արդյունքում ստացված արտարժույթային գումարը Հաճախորդի հայեցողությամբ կարող է թողնվել Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա կամ վերադարձվել Հաճախորդին, ինչի մասին պետք է նշում պարունակվի Հաճախորդի պատվերում:
4.5.Եթե Հաճախորդը ցանկություն է հայտնել ետ ստանալ Պատվերի կատարման արդյունքում գնված արտարժույթային գումարը, ապա այն պետք է վերադարձվի Հաճախորդին մինչև Պատվերի կատարման օրվան հաջորդող աշխատաքային օրվա ավարտը:
4.6.Հաճախորդի Պատվերները կատարվում են Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա առկա միջոցների սահմաններում:

5. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

5.1. Հաճախորդի Պատվերի հիման վրա Ներքին գործարքները կատարվում են Հաճախորդի՝ Ընկերությունում ունեցած դրամական միջոցների հաշվում համապատասխան գրառումներ կատարելու (գործարքը գրանցելու) միջոցով:
5.2.Ներքին գործարքների կատարման նպատակով Ընկերությունը սահմանում է իր կողմից արտարժույթի առքի և վաճառքի փոխարժեքներ՝ առնվազն ըստ յուրաքանչյուր այն արտարժույթի, որով Ընկերության Հաճախորդներից որևէ մեկը ունի դրամական միջոցներ:
5.3.Եթե Հաճախորդը պատվիրել է կատարել Ներքին գործարք, սակայն Ընկերությունը չունի տվյալ գործարքը կատարելու համար բավարար դրամական միջոցներ, ապա Ընկերությունը կարող է Հաճախորդի Պատվերը կատարել Արտաքին գործարքի միջոցով:

6. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՐՔ

6.1. Արտաքին գործարք կատարելիս ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է համախմբել իր Հաճախորդի Պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ Հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

6.1.1. որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Պատվերը կատարվեր առանձին,

6.1.2. ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:

6.2. Եթե Ընկերությունը իր Հաճախորդի Պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված Պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին:

6.3. Ընկերության Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության Դիլերային գործարքների նկատմամբ:

6.4. Արտաքին գործարքները Ընկերությունը կարող է կատարել ինչպես Բորսայում, այնպես էլ Սպասարկող բանկերի միջոցով:

6.5. Բորսայում գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և Բորսայի կողմից սահմանված կանոնների համաձայն:

6.6. Սպասարկող բանկի միջոցով գործարքները կատարվում են այդ բանկին փոխարկման հանձնարարական ներկայացնելու միջոցով, որի ձևը, ներկայացման ու կատարման գործընթացը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և տվյալ բանկի ներքին կանոնակարգերով:

6.7. Եթե հնարավոր չի լինում Հաճախորդի պատվերը կատարել Բորսայում, կամ այն կատարվում է մասնակիորեն, ապա այն կամ դրա չկատարված մասը պետք է կատարվի Սպասարկող բանկերի միջոցով:

7. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

7.1. Ընկերությունը գրանցում է Հաճախորդի պատվերով կատարված արտարժույթի առքի կամ վաճառքի ցանկացած գործարք:

7.2. Կատարված գործարքի մասին գրանցումները կատարվում են Հաճախորդի Պատվերը կատարելուց հետո՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

7.3. Կանոնակարգի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

7.3.1. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և(կամ) Հաճախորդին նույնականացնող համարը,
7.3.2. գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը և տարին,
7.3.3. Գնվող և վաճառվող արժույթները,
7.3.4. փոխարժեքը,
7.3.5. Գործարքի գումարը,
7.3.6. Այլ անհրաժեշտ տեղեկություններ:

8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

8.1. Եթե Ընկերությունը կատարել է Հաճախորդի Պատվերը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կատարման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հաճախորդին տրամադրի Պատվերի կատարման մասին հաշվետվություն:
8.2.Հաճախորդի Պատվերի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է՝

- Ընկերության անվանումը,
- Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ Հաճախորդին նույնականացնող համարը,
- Պատվերի կատարման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- Հաճախորդի կողմից տրված Պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- Գնվող և վաճառվող արժույթները,
- Փոխարժեքը,
- Գումարը,
- Գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը,
- Հաշվետվության ներկայացման ամսաթիվը,
- Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Օրենքով սահմանված այլ պարտադիր տեղեկություններ:

8.3. Սույն բաժնով սահմանված հաշվետվությունը ներկայացվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից հաստատված ձևով և Պայմանագրով սահմանված կարգով:

9. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Պատվերների կատարումն իրականացվում է Պայմանագրով սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Կանոնակարգով և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները և Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները կարող են լինել հայերեն, իսկ Հաճախորդի ցանկության դեպքում՝ այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն):
10.2. Կանոնակարգով չկարգավորված հարցերի նկատմամբ կիրառելի են Պայմանագրի և Ընկերության ներքին իրավական ակտերի դրույթները, այնքանով որքանով դրանք կիրառելի են:
10.3. Կանոնակարգը և դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության ժողովի (միակ մասնակցի) կողմից և ուժի մեջ են մտնում հաստատման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՁԵՎ

Հաճախորդի հետ կնքված Համաձայնագրի ամսաթիվը		
Հանձնարարականի տրման պահը *(րոպե/ժամ/օր/ամիս/տարի)*		
Հաճախորդի ԱԱՀ/անվանում		
Պատվերը ներկայացվել է	☐ գրավոր ձևով ☐ ոչ գրավոր ձևով	
Գնանշվող արժույթը		
Գնանշող արժույթը		
Գործարքի ծավալը գնանշվող արժույթով		
Գործարքի ծավալը գնանշող արժույթով		
Գործարքի տեսակը	☐ Առք ☐ Վաճառք	
Գործարքի նկարագիրը, եթե առք կամ վաճառք չէ		
Գործարքի բնույթը	☐ Ներքին գործարք ☐ Արտաքին գործարք	
Պատվերի բավարարման գնային պայմաններ (լրացվում է, եթե Պատվերը Ներքին գործարքի կնքման պատվեր չէ)	☐ Շուկայական ☐ Լիմիտային ☐ Ստոպ ☐ Ստոպ լիմիտային	
Պատվերի լիմիտային գին (եթե կիրառելի է)	Փոխարժեքը	
Գնված արտարժույթը պետք է	☐ Վերադարձվի Հաճախորդին	

	☐ Թողնվի Հաճախորդի հաշվի վրա
Պատվերի բավարարման ժամանակային պայմաններ	☐ Օրական ☐ Բաց ☐ Ժամկետային _____ (վերջնաժամկետ)
Պատվերի բավարարման քանակական պայմաններ	☐ Մասնակի ☐ Ամբողջությամբ բավարարել կամ չբավարարել ☐ Այլ _____
Գործարքի ընդհանուր գումար	
Միջնորդավճար գործարքից	
Պարգևավճար՝ պատվերը սպասվածից ավելի լավ բավարարած մասից	
Ստորագրություն՝ ☐ Հաճախորդ ☐ Հաճախորդի կողմից լիազորված անձ	Պատվերը ընդունեց: _____ (Անուն, Ազգանուն)
Սույնով հավաստիացնում եմ, որ ծանոթ եմ Ընկերության ներքին իրավական ակտերին և և ստացել եմ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր պարտադիր տեղեկությունները	
_____ (Ստորագրություն)	_____ (Ստորագրություն)